

- 72 Սոքին բամեալ միշտ գընային
Առ լըսել բան քաջ քարոզին,
Զոր Սարգիս մեր ըստ պատշաճին
Յեկեղեցիս կարգայր Ազգին:
- 73 Բայց ոչ դիտօք զՕհեոս ուղղելոյ՝
Այլ ըզբառս ինչ նըշմարելոյ,
Զի պատճառանս կայցին յետոյ
Առ ըզՍարգիս բամբասելոյ:
- 74 Որպէս եւ իսկ զՕնա բասրէին,
Ըստ սագրելոյ շար բանսարկուին,
Ի հրապարակս եւ առտընին
Չարամեկնեալ ըզբան նորին:
- 75 Առ ատելի առնել ըզնա
Ասէին նախ՝ թէ եկեր նա
Զողջոյն ըզբաշն Սուրբ Յակոբայ,
Զոր բոսեալն էր յԸզմիւռնիայ:
- 76 Եւ թէ յաւուր միում՝ Սարգիս
Ատեր, լաւ է ուտել ըզմիս
Յաւուրս պահոց յամէն տարիս
Քան բամբասել զընկեր մարդիս:
- 77 Յասելն որոյ թէ գուճտ սիսուան
Ոչ բանայր գուռն արբայու թեան,
Կամի առնել անպէտ, խոտան
Ըզպահս Ազգիս մեր Արամեան:
- 78 Եւ թէ յաւուրս աղուհացից
Եւ այլ պահոց պարասկեւից
Չէթ ի վերայ հեղոյր խահից,
Եւս եւ սընկոց խորովածից: